



Միպիլ

Ճշմարտության ծարավ

Չուզեցի խաբվիլ մանկությանս օրեն.
Կեղծիքը ահն էր, սարսափն էր կյանքիս.
Պատրանքներու մեջ ապրիլ վատորեն
Միշտ մերժեց, ատեց իմ խրոխտ հոգիս:

Վերքերը փաթթող շղարշնե՛ր քնքուշ,
Ծաղիկնե՛ր որոնք թույն կը պարփակեն,
Միրտըս փայփայող խոստումներ անուշ,
Որքա՛ն դողացի ձեր սուտ դյութանքն:

Տենչոտ, հրրաշունչ համբույրնե՛ր անհագ,
Խուսափուկ սիրո գոգտրիկ փափրտ՛ւք,
Ծով նայվածքներու ահե՛ղ կաղարդանք,
Լանջքրդ տոչորող հրախա՛նձ պասուք:

Ինչպե՛ս մերժեցի, ինչպե՛ս վանեցի
Ձոր արբեցընեղ խրոովքն անսահման,
Զնշեցի իսպառ հանձնելով բոցի
Ինչ որ խաբուսիկ երաղ էր միայն:

Եվ թմրեցընող հանկուցիչ սուտոր՝
Դուք որ անդունդին եզերքը անլույս
Կամ գերեղմանի փոսին առընթեր՝

Բուռ-բուռ կը սփռեք ցնորքներ և հույս:

Երբեք ձեր գութին չըդիմեցի ես,
Որպեսզի սուգիս, տագնապներուս մեջ

Փարատեք, անայդ գիշերու պես
Սև կսկիծներուս խավարը անվերջ:

Կյանքին իրական մեծ սարսափներեն
Երբեք չը վախցա. չուղեցի որ զիս
Սուտ տեսիլքներով զգվեն, օրորեն.
Մերկ ճշմարտության ծարավ էր հոգիս:

Խուժողով վայելք մ'էր միշտ ինձի համար
Շոշափել դաշույնն, որ պիտի խոցեր
Իմ հեք, բաբախուն սիրտըս խանդավառ
Որ ցավեն կուլար ու կ'ալեկոծեր:

Միշտ բզբտեցի ձեռքով մ'անսարսուռ
Քողը վարդագույն, քողը ոսկեթել,
Որ ճշարիտը ծածկեց ինձմե գո'ր,
Եվ խաբկանքներով ուզեց զիս դյութել:

Ու հիմա, թո'ղ զիս գալարեն, տանջեն.
Հոգիդ մի'շտ ազատ, անյլայլ ու սեգ՝
Հաղթապանձ կ'ելլե ցավերու մեջեն.
Միայն թե զինքը չը խաբեն երբեք: